ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

# ИСТОРИЯ И КУЛЬТУРА

## АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

# HISTORY AND CULTURE

## JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2019

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի*
*Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Նախագահ (գլխավոր խմբագիր)՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
*Խմբագրական խորհուրդ՝*
**Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆեսոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.):

Председатель (главный редактор) - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
*Редакционная коллегия:*
**Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, докт. ист. наук, проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, докт. ист. наук, проф.), **Артак Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян** (докт. ист. наук, проф.), **Айк Аветисян** (докт. ист. наук, проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. наук, проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (докт. ист. наук, проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук, доц.), **Игит Гарибян** (докт. ист. наук, проф.), **Генрих Абраамян** (докт. ист. наук, проф.), **Айказ Оганесян** (докт. ист. наук, проф.), **Ашот Нерсесян** (докт. ист. наук, проф.), **Ашот Айруни** (докт. ист. наук, проф.), **Валерий Тунян** (докт. ист. наук, проф.), **Ваник Вирабян** (докт. ист. наук, проф.), **Рафик Наапетян** (докт. ист. наук, проф.), **Акоб Арутюнян** (докт. ист. наук, доц.), **Овик Григорян** (канд. ист. наук, доц.), **Мхитар Габриелян** (канд. ист. наук, доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. наук, доц.).

Chairman (Editor-in-Chief) - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
*Editorial Board:*
**Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate professor), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate professor).

ISSN 1829-2771

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
# СОДЕРЖАНИЕ / CONTENT

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
## ИСТОРИЯ / HISTORY


Հովհաննես Խորիկյան, ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ..... 6
Оганнес Хорикян, К ВОПРОСУ О ЦЕНТРЕ САТРАПСКОЙ АРМЕНИИ
Hovhannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA
Արտակ Մովսիսյան, Լիաննա Կարապետյան, ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ ..... 14
Артак Мовсисян, Лианна Карапетян, О ПРОБЛЕМАХ ХРОНОЛОГИЧЕСКИХ И ТЕРРИТОРИАЛЬНЫХ ГРАНИЦ ЦАРСТВА СОФЕНЫ
Artak Movsisyan, Lianna Karapetyan, ON THE PROBLEMS OF THE CHRONOLOGICAL AND TERRITORIAL BORDERS OF THE KINGDOM OF SOPHENE
Արգիշտի Վարդանյան, ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՏՈՀՄԸ ՏՐԴԱՏ ՄԵԾ ԵՎ ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ ..... 24
Аргишти Варданян, РОД МАМИКОНЯНОВ ВО ВРЕМЯ ПРАВЛЕНИЯ АРШАКИДОВ ТРДАТА ВЕЛИКОГО И ХОСРОВА КОТАКА
Argishti Vardanyan, THE HOUSE OF MAMIKONYANS DURING THE REIGN OF TRDAT THE GREAT AND KHOSROV KOTAK
Дмитрий Димидюк, ХОЛОДНОЕ ОРУЖИЕ В АРМЯНСКИХ ХРОНИКАХ ЭПОХИ БАГРАТИДОВ (КОНЕЦ IX- СЕРЕДИНА XI ВВ.): ТЕРМИНОЛОГИЯ ВОПРОСА ..... 33
Դմիտրի Դիմիդյուկ, ՍԱՌԸ ԶԵՆՔԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (IX Դ. ՎԵՐՋ-XI Դ.). ՀԱՐՑԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
Dmytro Dymydyuk, BLADE WEAPONS IN THE MEDIEVAL ARMENIAN CHRONICLES OF THE BAGRATID ERA (END OF 9TH - MIDDLE OF 11TH CENTURIES): THE PROBLEM OF TERMINOLOGY
Դավիթ Թինոյան, ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ..... 48
Давит Тиноян, АРМЯНСКИЙ КАТОЛИКОСАТ В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ ПРАВЛЕНИЯ ХЕТУМА II
Davit Tinoyan, THE ARMENIAN CATHOLICOSATE IN THE FIRST HALF OF THE RULE OF HETUM II
Դիանա Հայրապետյան, ՕՍՄԱՆՅԱՆ ՖՈՒԹՈՒՎՎԱԹԻ ԵՎ ԱԽԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (XIII-XV ԴԴ.) ..... 55
Диана Айрапетян, РОЛЬ ОТТОМАНСКОГО ФУТУВВАТА И АХИЙСКОГО БРАТСТВА В ИСЛАМИЗАЦИИ АРМЯНСКИХ РЕМЕСЛЕННИКОВ (XIII-XV ВЕКА)
Diana Hayrapetyan, THE ROLE OF OTTOMAN FUTUWWA AND AKHI BROTHERHOOD IN THE PROCESS OF ISLAMIZATION OF ARMENIAN CRAFTSMEN (XIII-XV CC)
Ֆելիքս Մովսիսյան, XIX Դ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՍՈՆ ՍԵՐՈՎԲԵ ԱԶՆԱՎՈՒՐԸ ..... 63
Феликс Мовсисян, ВЫДАЮЩИЙСЯ ЗАПАДНОАРМЯНСКИЙ МАСОН XIX ВЕКА СЕРОВБЕ АЗНАВУР
Felix Movsisyan, FAMOUS WESTERN ARMENIAN MASON OF THE 19TH CENTURY SEROVBE AZNAVOUR
Հովիկ Գրիգորյան, ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ «ՆԺՈՒՅԳԻ ԳՈՐԾ»-Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ (1904 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1905 Թ. ՄԱՐՏ) ..... 77
Овик Григорян, ДЕЯТЕЛЬНОСТЬ ОТВЕТСТВЕННОГО УКАЗЫВАЮЩЕГО КОНСТАНТИНОПОЛЬСКОГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН НА ПЕРВОМ ЭТАПЕ ПОДГОТОВКИ «ДЕЛА КОНЬЯ» (СЕНТЯБРЬ 1904 Г. - МАРТ 1905 Г.)

Hovik Grigoryan, THE ACTIVITY OF ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION'S (ARF-DASHNAKTSUTYUN) CONSTANTINOPLE'S INDICATIVE ORGANIZATION IN THE FIRST STAGE OF PREPARATION OF "THE CASE OF NZHUYK" (SEPTEMBER, 1904 - MARCH, 1905)
Վանիկ Վիրաբյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ ԶԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ 1918-1920 ԹԹ. ..... 95
Ваник Вирабян, ПОИСК ОРУЖИЯ ДЛЯ АРМЯНСКОЙ АРМИИ В 1918-1920 ГГ
Vanik Virabyan, THE AMMUNITION PROCURANCE OF THE ARMENIAN ARMY (1918-1920)
Հովիկ Գրիգորյան, Վահագն Հակոբյան, ՈՒՐՎԱԳԾԵՐ ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ..... 108
Овик Григорян, Ваагн Акопян, ОЧЕРКИ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ДАВИДА АНАНУНА
Hovik Grigoryan, Vahagn Hakobyan, NOTES ON DAVID ANANUN'S LIFE AND ACTIVITY
Արամ Սիմոնյան, Ալեքսանդր Սաֆարյան, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ ..... 129
Арам Симонян, Александр Сафарян, ИЗ ИСТОРИИ ОЦЕНКИ ИДЕОЛОГИИ ТЮРКИЗМА В ТРУДАХ ИСТОРИКОВ АРМЕНИИ
Aram Simonyan, Safaryan Alexander, ON THE IDEOLOGY OF TÜRKÇÜLÜK IN THE WORKS OF ARMENIAN HISTORIANS
Валерий Тунян, ФЕЙК-НЬЮС ПРОПАГАНДЫ ТУРЦИИ И АЗЕРБАЙДЖАНА ..... 137
Վալերի Թունյան, ԹՈՒՐՔԻԱՅԻ և ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԸ
Valery Tunyan, FAKE NEWS OF TURKEY AND AZERBAIJAN PROPAGANDA

## ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
## АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Հայկ Ավետիսյան, Արսեն Բոբոխյան, Արտակ Գնունի, Լևոն Մկրտչյան, Նատալյա Ավետիսյան, ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ ..... 145
Гайк Аветисян, Арсен Бобохян, Артак Гнуни, Левон Мкртчян, Наталья Аветисян, ОПЫТ СИТУАЦИОННОГО АНАЛИЗА ПОГРЕБАЛЬНОГО ОБРЯДА
Hayk Avetisyan, Arsen Bobokhyan, Artak Gnuni, Levon Mkrtchyan, Natalya Avetisyan, THE EXPERIENCE OF SITUATIONAL ANALYSIS OF THE FUNERAL RITE
Ռաֆիկ Նահապետյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ..... 158
Рафик Наапетян, ОБ ЭТНОГРАФИЧЕСКОМ ИССЛЕДОВАНИИ АРМЯНСКОГО НАРОДНОГО ТРАДИЦИОННОГО ЖИЛИЩА
Rafik Nahapetyan, ON THE ETHNOGRAPHIC STUDY OF THE ARMENIAN NATIONAL TRADITIONAL APARTMENT

## ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
## ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Արթուր Հովհաննիսյան, ԽՈՐԵՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅԱՆԻ ԳՐԱՖԻԿԱՆ ..... 166
Артур Ованнисян, ГРАФИКА ХОРЕНА ТЕР-АРУТЯНА
Arthur Hovhannisyan, KHOREN-DER HARUTYAN'S GRAPHIC

## ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
## ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Էդիկ Մինասյան, Լևոն Բատիև, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ 1991-2019 ԹԹ. ..... 174
Эдик Минасян, Левон Батиев, ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ ДОНА В ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ И КУЛЬТУРНОЙ СФЕРЕ В 1991-2019 гг.

Edik Minasyan, Levon Batiev, RELATIONS OF THE 3rd REPUBLIC OF ARMENIA WITH ARMENIAN COMMUNITY OF DON IN SOCIAL-POLITICAL AND CULTURAL SPHERES IN 1991-2019
Արման Եղիազարյան, Ալիկ Ղարիբյան, Դիանա Դավթյան, ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ..... 191
Арман Егиазарян, Алик Гарибян, Дианна Давтян, ПРОБЛЕМЫ ИДЕНТИЧНОСТИ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ МОСКВЫ
Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ISSUES OF IDENTITY OF MOSCOW ARMENIAN YOUTH
Հովհաննես Ալեքսանյան, ՀԱՅԱԶԳԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ..... 200
Ованнес Алексанян, АРМЯНЕ-ПАРТИЙНО-ГОСУДАРСТВЕННЫЕ ДЕЯТЕЛИ В СОВЕТСКИХ РЕСПУБЛИКАХ СРЕДНЕЙ АЗИИ
Hovhannes Aleksanyan, ARMENIANS-PARTY-STATE LEADERS IN THE SOVIET REPUBLICS OF CENTRAL ASIA

**ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**
**ИЗДАНИЕ РУКОПИСЕЙ / PUBLICATION OF MANUSCRIPTS**

Հայկազ Հովհաննիսյան, ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ..... 206
Айказ Оганесян, ВИДЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ СТЕПАНОСА НАЗАРЯНЦА
Haikaz Hovhannisyan. VISION OF STEPANOS NAZARYANTS ABOUT NATIONAL EDUCATION

**ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ**
**УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL**

Լևոն Հովսեփյան, ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ ..... 214
Левон Овсепян, ОСОБЕННОСТИ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОБУЧЕНИЮ ПОЛИТИКИ В СФЕРЕ БЕЗОПАСНОСТИ И ОБОРОНЫ ТУРЦИИ
Levon Hovsepyan, THE SPECIFICS AND METHODOLOGY OF TEACHING TURKEY'S SECURITY AND DEFENSE POLICY

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**
**РЕЦЕНЗИЯ / REVIEW**

Փայլակ Ենգոյան, էդիկ Մինասյան, «Երևանի պետական համալսարանն ուհամալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.»), Եր., ԵՊՀ հրատ., 2019, 586 էջ + 48 ներդիր: ..... 222

**ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ** ..... 224

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ** ..... 226
**INFORMATION ABOUT THE AUTHORS** ..... 228

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ** ..... 230
**NOTICE FOR THE AUTHORS**

Դավիթ Թինոյան

# ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

***Բանալի բառեր.*** Հայոց թագավոր, ունիթոր, Հայոց կաթողիկոս, խաչակրաց պետություններ, Մերձավոր Արևելք, հայ-մամլուքյան պայմանագիր:

Կիլիկիո հայոց թագավորությունը ԺԴ դարասկզբին իրապես հայտնվել էր աշխարհաքաղաքական բավական բարդ իրադրության պայմաններում: Հայոց թագավորության արտաքին քաղաքական հավասարակշռության պահպանման նախադրյալները, որոնք, որ առկա էին նախոր շրափուլում, այժմ այլևս առկա չէին: Ճիշտ է, ԺԴ դ. առաջին տարիներին այս կամ այն ձևով դեռևս պահպանվում էր հայ-մոնղոլական դաշինքը, բայց փաստ էր, որ մահմեդականություն ընդունած և տարածաշրջանային ադեցությունը արագ տեմպերով կորցնող իլղանությունն այլևս դադարում էր կատարել աշխարահաքաղաքական հովանոցի այն դերը, որն այն ուներ Կիլիկիայի համար ԺԳ դ. երկրորդ կեսին: Վերոգրյալ շրջանում ուղենշային փոփոխություններ էր կրել նաև եվրոպական գործոնը տարածաշրջանում. Լևանտի ծովեզրյա շրջաններում այդ ներկայությունն արդեն չկար: Խաչակրաց պետություններից միակը, որը շարունակում էր իր գոյությունը, Կիպրոսի թագավորությունն էր, որին ի տարբերություն արդեն կործանված ցամաքային խաչակրաց պետությունների, հարևան մահմեդական պետություններից որևէ ուղիղ սպառնալիք չէր սպառնում: Ի տարբերություն նախորդ շրջափուլի դա ենթադրում էր եվրոպական երկրների տարածաշրջանային միջամտության հավանականության էական նվազում: Բացի այդ, տեղի էր ունեցել ավելի խոշոր փոփոխություն. Արևմտյան Եվրոպան դուրս էր գալիս առևտրա-արտադրական հարաբերությունների նոր մակարդակ, երբ արդեն ձեռնտու չէր սեփական մարդկային ռեսուրսների տեղաշարժը դեպի օտար երկրներ: Իսկ վերոգրյալ հանգամանքը այն կարևոր նախապայմաններից էր, որի շրջանակներում տեղի ունեցան խաչակրաց արշավանքները ԺԱ-ԺԳ դդ.: Բացի այդ եվրոպական ազդեցիկ քաղաքական սուբյեկտները՝ Ֆրանսիան, կաթոլիկ եկեղեցին, Գերմանական կայսրությունը, Անգլիան, Արագոնը ավելի ու ավելի էին խորամուխ լինում ներեվրպական խնդիրների մեջ:

Նման պայմաններում հայկական կողմի համար առաջնային նշանակություն էր սկսում ձեռք բերել հենց Կիպրոսը: Ճիշտ է, այն չէր կարող լրացնել աշխարահաքաաքական այն բացը, որը առկա էր դառնում խաչակրաց պետությունների կործանման և հայ-մոնղոլական հարաբերությունների սառեցման պայմաններում, բայց այնուամենայնիվ հենց այս թագավորությունը հետագա տասնամյակների ընթացքում որոշակի հենարանի դերակատարություն ունեցավ հայկական թագավորության համար: Շատ կարևոր էր նաև խնդրի հոգեբանական գործոնը. Կիպրոսը ԺԴ դարասկզբին Կիլիկյան թագավորությունից բացի միակ քրիստոնյա պետությունն էր արևելյան Միջերկրածովում: Եվ մահմեդականների միջավայրում քրիստոնեական կղզյակի առկայությունը Կիլիկիայի հարևանությամբ որոշակի հոգեբանական ապահովության էլեմենտներ էր պարունակում: Պատահական չէ, որ հենց ԺԳ դարավերջից սկսյալ ավելի հաճախակիացան հայ-կիպրոսյան շփումները, որոնց շրջանակներում փոքր տեղ չէր զբաղեցնում նաև խնամիական կապերի հաստատումը[1]: Ահա, ԺԴ դարասկզբին նման պայմաններում էր հարկադրված գործել հայկական արքունիքը, որի հիմնական գործառույթը պետության ֆիզիկական անվտանգության ապահովումն էր:

Ներքաղաքական առումով էլ ԺԳ դարավերջը հայոց թագավորությունում նշանավորվեց ներիշխանական լարվածության և գահակալական պայքարի աննախընթաց սրմամբ: Դարի վերջին տասնամյակում հայոց թագավորի գահը զբաղեցրեցին չորս եղբայրներ՝ Հեթում Բ-ն, Թորոսը (վերջինս հանդիսանում էր երկրի փաստացի ղեկավարը Հեթումի բացա-

[*] *Հոդվածը ներկայացվել է 01.10.2019 թ., գրախոսվել է 15.12.2019 թ., ընդունվել է տպագրության 20.12.2019 թ.:*

[1] Հենց այդ շրջանում հաստատված խնամիական կապերի արդյունքում Կիպրոսյան Լուզինյանները պետք է հայտնվեին հայոց գահին:

կայության շրջանում), Սմբատը և Կոստանին Ա-ն[1]: Հարդյունս ընթացող ներքաղաքական անկայունության՝ դեռ չբուժած 1292 թ. մամլուքյան արշավանքի վերքերը, 1298 թ. Կիլիկիո հայոց թագավորությունը հերթական ծանր հարվածը ստացավ մամլուքներից՝ կրելով տարածքային ու մարդկային կորուստներ: Ընդ որում, ժամանակակիցները գրեթե ուղղակի կերպով մեղադրում են հենց Հեթումին Հռոմկլայի անկման համար. «... Զի զոր դու ի Գլխաբացի եկեղեցւոյն արտաքսեցեր, նա ըզքոյն արտաքսեաց ի մեծ աթոռոյ Հռոմկլային: Զոր դու քո ձեռամբ մերկացուցեր ի զգեստուն, նա մերկացոյց ձեռամբ սուլտանին Մըսրայ զքո եդեալ հայրապետն»[2]:

Կոստանդինին գահից հեռացնելուց հետո (1298-1299 թթ.) արդեն հաջորդ տարի Հեթումը կարողանում է մոնղոլների հետ դաշնակցած ետ բերել կորսված տարածքները (դրանք կորսվել էին 1290-ական թթ. երկրորդ կեսին Կիլիկիայում տեղի ունեցած երկպառակտչական պատերազմների պատճառով), բայց դա մոնղոլների հետ հարաբերությունների անկման ընդհանուր օրինաչափությունից դուրս երևույթ էր և հայ-մոնղոլական դաշնակցության վերջին դրսևորումներից մեկը[3]: Կիլիկիայում ձևավորված ներքաղաքական լարված իրադրության ձևավորմանը նպաստեց մեծապես նաև հենց Հեթում Բ-ի վարած քաղաքականությունը: Վերջինս հայոց թագավորների ցանկում բավական բացառիկ համարում ունի. նա որոշ հիշատակություններում նույնիսկ չի ներկայացվում որպես արքա: Մասնավորապես, հիշատակարաններից մեկում գրված է. «... ի թուականիս Հայոց ՉԼԹ (1290), ի հայրապետութեան տեառն Ստեփանոսի յառաջնում ամի, և թագապահութեան Հայոց խաղաղարար և բարեհամբաւ արքայորդոյն տեառն Հեթմոյ, որդւոյ Լևոնի»[4]: Մեկ այլ հիշատակարանում Հեթումը հիշատակվում մի փոքր այլ կերպ. «... եւ ի թագաւորութեանն Հեթմոյ աթոռապահի...»[5]: Փաստ է, որ Հեթումը Հայոց այն բացառիկ միապետերից էր, որն այդպես էլ չթագադրվեց և եթե նկատի ունենանք այն փաստը, որ նա այդպես էլ չամուսնացավ, հաշվի առնենք նաև նրա՝ գահից և ունեցած փաստացի իշխանությունից հրաժարման մի քանի փաստերը, միջնադարյան իրավագիտակցության տեսանկյունից կարող ենք փաստել, որ ինչպես նա, այնպես էլ հայ հանրույթը իրականում նրան հենց որպես թագապահ էլ դիտարկում էր: Անշուշտ, հայոց հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերություններում առկա լարվածությունն էլ իր ազդեցությունն ունեցավ երկրի կենսունակության թուլացման հարցում: Եթե կիլիկյան հոգևորականությունը Հեթումին հակադրվելու առավել սահմանափակ ռեսուրսային հնարավորություններ ուներ՝ հաշվի առնելով Հռոմկլայի անկումը և կաթողիկոսարանի տեղափոխումը Սիս, ապա Մեծ Հայքի հոգևորականությունը այդ առումով առավել ինքնուրույն էր: Կաթոլիկ դավանանք ունեցող միապետի առկայությունը բնականաբար լարեց արևելյան հայ հոգևորականության և կիլիկյան արքունիքի փոխհարաբերությունները:

Ընդհանրացնելով Հեթումի ընդմիջումներով մոտ տասութամյա գահակալումը՝ կարող ենք փաստել հետևյալը. նա հայոց պատմության ընթացքում իշխած՝ պետական գործչի ունակություններից զուրկ սակավաթիվ ղեկավարներից մեկն է եղել: Հենց նրա անկարողության հետևանքն էին ինչպես եղբայրասպան հակամարտությունները, այնպես էլ մամլուքների կողմից իրականացրած մի քանի կործանարար հետևանք ունեցող արշավանքները, որոնք էական ազդեցություն ունեցան երկրի պաշտպանունակության թուլացման հարցում: Բայց նրա ամենամեծ ձախողումը կապված էր հոգևոր գործունեության հետ: Հայոց իշխանությունը և ապա՝ թագավորությունը, ի հայտ գալով խաչակրաց պետությունների միջավայրում, էական կախում ունենալով արևմտյան եկեղեցու առաջնորդի քաղաքականությունից, այնուհանդերձ, իր գոյության երկհարուրամյա շրջանում մինչ Հեթումը չգնաց դավանաբանական որևէ զիջման հռոմեական եկեղեցուն: Բարդագույն խնդիրը այդ առումով Լևոն Մեծագործին էր,

---

[1] Վերջինս ևս, ինչպես Թորոսը, սկզբում կառավարել է Հեթումի համաձայնությամբ՝ որպես Հայոց պարոն: Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հատոր Բ, Ե., 2007, էջ 356:

[2] «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սյունեաց», Թիֆլիս,1910,էջ 445:

[3] Հաջորդող մի քանի տարիներին հայ-մամլուքյան պատերազմը շարունակվեց փոփոխակի հաջողություններով, որտեղ նույնիսկ մոնղոլների օժանդակությամբ Հեթումը սկզբնական շրջանում նշանակալի հաջողություններ գրանցեց. Տես Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 557:

[4] «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյանը, Երևան 1984, էջ 660:

[5] «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Ե-ԺԲ դարեր, աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Ե., 1988, էջ 336:

որը առանց որևէ լուրջ զիջման կարողացավ ձեռք բերել թագավորական կարգավիճակ: Այլ էր սակայն Հեթում Բ-ի պարագան. վերջինս իր թագավորության սկզբնական շրջանում, վանք մտնելով, օծվեց որպես կաթոլիկ վանական: Մի կողմ թողնելով վանական կյանքի անցնելու, բայց նաև քաղաքական որոշումների կայացման գործընթացի վրա իր ազդեցությունը պահպանելու անլուրջ իրողությունը՝ փաստենք, որ հայկական հանրույթի և հատկապես հայկական հոգևորականության համար շատ ավելի նվաստացուցիչ պետք է լիներ երկրի ղեկավարի դերում կաթոլիկ միաբան ունենալը: Փաստենք, որ հենց դա էր Հեթումի ոչ կարճ գահակալման շրջանի գլխավոր և կոպտագույն սխալը: Կաթոլիկ եկեղեցին դեռևս ԺԲ դարասկզբից շահագրգիռ է եղել հայության կաթոլիկություն ընդունել տալու հարցում: Բոլոր նմանատիպ փորձերը ձախողվել էին նախկինում: Իհարկե, դա չէր ենթադրում, որ կիլիկյան արքունիքը չէր դիտարկում կաթոլիկ աշխարհը որպես սեփական թագավորության անվտանգության համակարգի բաղկացուցիչ մաս: Բայց հայկական կողմի դավանափոխության խնդիրը նույնիսկ այդ պարագայում, որպես եվրոպական օժանդակություն ստանալու գրավական, այդպես սուր կերպով երբեք չէր դրվում: Իսկ ահա արդեն Հեթումից սկսյալ մինչև թագավորության անկումը դավանաբանական զիջումների միջոցով եվրոպական երկրներից օժանդակություն ստանալու հարցը դարձավ օրակարգային կիլիկյան դիվանագիտության համար դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Դա հասկանում էին նաև ժամանակակիցները, օրինակ Գևորգ Սկևռացի ուսուցչապետը, որը ամենածանր խոսքերով է ձաղկում հայոց թագավորի դավանաբանական գործունեությունը[1]: Ասվածի համատեքստում էլ պետք է դիտարկել Կոստանդին Կատուկեցու աթոռազրկումը 1289 թ.: Հեթումի գահ բարձրանալուց գրեթե անմիջապես հետո արքան և Գրիգոր Անավարզեցի եպիսկոպոսը ձեռնամուխ եղան Կատուկեցու աթոռազրկման գործընթացին. «.. ապա վախճանեալ թագաւորին Լևոնի որդւոյ Հեթում. և սա նախանձ հակառակութեան բերեալ ի սրտին ընդ կաթողիկոսին Կոստանդեայ առնէ ինքեան խորհրդակից յեպիսկոպոսաց և յիշխանաց գլխաւորագոյնսն, նա և ի վարդապետաց իսկ»[2]: Ընդ որում, կազմակերպված ժողովը, որը տեղի ունեցավ Սսում, իրավական տեսանկյունից խնդրահարույց էր, քանի որ դրան չէր մասնակցում կաթողիկոսը, իսկ ներկայացված մեղադրանքները որևէ կերպ չապացուցվեցին, ուստի՝ աթոռազրկման համար հիմք դառնալ չէին կարող: Բացի այդ ժողովը կազմակերպված էր բավական հապշտապ, դրան չէին մասնակցում «արևելցի հոգևորականները»: Անշուշտ, Հեթումը մտադիր էր արագորեն կյանքի կոչել իր դավանաբանական ծրագիրը և ձեռնադրել իր գաղափարակից Գրիգորին, բայց, ըստ երևույթին, հնարավոր դժգոհությունները ստիպեցին արքային ընտրություն կատարել Ստեփանոս Հռոմկլայեցու թեկնածության վրա: Վերջինս բավական ծեր էր, չուներ հոգևոր առաջնորդին բնորոշ հատկանիշներ, ներկայացնում էր հոգևորականության կիլիկյան հատվածը, ուստի պատահական չէր, որ կաթողիկոսարանի փաստացի ղեկավարությունը ընդհուպ մինչև 1292 թ. իրականում գտնվում էր Գրիգոր Անավարզեցու ձեռքում: Նույն համատեքստում պետք է դիտարկել նաև Գրիգորի աթոռակալումը 1293 թ.: Վերջինս մոտ երեք տասնամյակ հանդիսանում էր Կիլիկիայի ամենաազդեցիկ թեմերից մեկի՝ Անավարզայի թեմի առաջնորդը և կաթողիկոսական տեղապահը: Ընդ որում, լինելով հայ և կաթոլիկ եկեղեցիների միավորման ջատագով, մինչև Ստեփանոս Հռոմկլայեցու աթոռակալումը ամենակտիվ դերակատարում ունեցավ Սսում ժողով գումարելու և Կոստանդին Կատուկեցի կաթողիկոսի աթոռազրկման հարցում: Փաստենք նաև, որ մինչ Կոստանդին կաթողիկոսի աթոռակալումը Գրիգորը փորձ կատարել էր զբաղեցնելու հայրապետական աթոռը, որը ձախողվել էր: Ընդ որում, որքան էլ որ Կատուկեցին թե՛ իր տարիքի և թե՛ խառնվածքի պատճառով որևէ իրական վտանգ չէր ներկայացնում Հեթումի և Գրիգորի համար, այնուամենայնիվ նա շարունակում էր մնալ բանտարկված ընդհուպ մինչև 1293 թ.: Նա ազատվեց միայն Գրիգորի ձեռնադրումից հետո, երբ այլևս բացարձակապես որևէ վտանգ չէր ներկայացնում իրենից, ավելին, նույն թվականին նա նշանակվեց Սկևռայի վանքի առաջնորդ: Ինչևէ, Ստեփանոսի ղեկավարման երեք կարճատև տարիների ընթացքում կաթողիկոսարանի կառավարման ղեկը Գրիգորը պահում էր իր ձեռքերում: Հռոմկլայի գրավման և կաթողիկոսի գերության հետևանքով ևս մեկ տարի Գրիգորը շարունակեց ղեկավարել հայոց եկեղե-

[1] Տե՛ս Բաղդասարյան Է., Գևորգ Սկևռացու վարքը, «Բանբեր Մատենադարանի»,1964, N 7, էջ 428-430:
[2] Ստեփաննոս Օրբէլեան, էջ 436:

ցին: Եվ միայն նրանից հետո, երբ 1293 թ. հատնի դարձավ, որ գերության մեջ մահացել է կաթողիկոս Ստեփանոսը, Գրիգոր Անավարզեցին պաշտոնապես ստանձնեց կաթողիկոսի պարտականությունները[1]: Հարկ է նշել, որ եկեղեցու միավորման կողմնակիցների ազդեցության աճի վրա ադեցություն ունեցավ նաև Հռոմկլայի զավթումը, որքան էլ որ վերջինս գտնվում էր այս կամ այն կերպ հայոց թագավարի ազդեցության սահմաններում, այդուհանդերձ իրավական առումով այդ տարածքը ենթակա չէր Հեթումին և հանդիսանում էր կապող օղակ կիլիկյան և «արևելյան» հոգևորականության միջև: Այժմ սակայն այդ պատվարը, որը թեկուզև թույլ, բայց և ուներ հնարավորություն հակադրվելու կիլիկյան աշխարհիկ վերնախավին, այլևս չկար[2]: Մոտ մեկ տարի, քանի դեռ կենդանի էր գերեվարված կաթողիկոսը, հայրապետական աթոռը թափուր մնաց[3]: Անշուշտ, այս հանգամանքը կարևոր էր, բայց կար ևս մեկ գործոն:

Բանն այն էր, որ թեև նախորդող շրջանի համեմատությամբ նկատելիորեն թուլացել էր Մեծ Հայքի հոգևորականության դերակատարությունը հայոց հոգևոր կենտրոնում որոշումներ կայացնելու գործընթացի վրա, բայց այուհաներձ այն դեռևս զգալի էր, մանավանդ, որ Սյունյաց մետրոպոլիտությունը դեռևս Կոստանին Կատուկեցու հայրապետության շրջանում ստացել էր հայոց եպիսկոպոսությունների մեջ նախաթոռության իրավունք: Ունենալով զգալի ազդեցություն՝ արքան և Գրիգորը պետք է որոշակիորեն հաշվի առնեին Սյունյաց եպիսկոպոսի տեսակետը Անավարզեցու աթոռակալման վերաբերյալ: Բավական հետաքրքիր է Սյունյաց մետրոպոլիտի վերաբերմունքը Գրիգոր Անավարզեցու հանդեպ. «դարձեալ առնէ ժողով թագաւորն Հեթում և տայ ձեռնադրել կաթողիկոս Հայոց զՏեր Գրիգոր Անաւարզայ եպիսկոպոս, այր գիտնական և առաքինի, սիրող եկեղեցւոյ, տօնասէր և տօնախմբիչ տօնից տէրունականաց, և պայծառացուցիչ յիշատակաց մարտիրոսաց, ի թուականին 742»[4]: Փոքր անց, սակայն, Ստեփանոս Օրբելյանը նշում է. «Իսկ հայրապետն մեր Տէր Գրիգոր աստանօր սխալեաց մեծապէս և ի բացեկաց ի Ճշմարտութենէն: Ի թողեալ զբնական և զհայրենի շաւիղս նախնեացն սրբոց հետևեցաւ ընդ թիւր և զարտուղի ընթացս Յունաց. և հաւանեցուցեալ զզթագւորն բռնութեամբ տօնեաց…»[5]: Բավական տարակուսելի կարող են թվալ այս միանգամայն տարբեր որակումները տրված միևնույն անձի վերաբերյալ: Մինչ Գրիգորի օծումը հայ հոգևորականության մոտ հայտնի էին Անավարզայի եպիսկոպոսի դավանաբանական մոտեցումները ու որոշակիորեն անակնկալ չէր և վերջինիս գործունեությունը արդեն կաթողիկոս ձեռնադրվելուց հետո: Այս պարագայում ենթադրելի է, որ մինչև ձեռնադրումն ընկած մեկ տարի ժամանակահատվածը Գրիգորի և նրա գործակիցների կողմից օգտագործվել է հենց «արևելյան» եպիսկոպոսների գոնե լուռ համաձայնությունը ստանալու համար: Միանգամայն հնարավոր է, որ կիլիկյան թևի ներկայացուցիչները նաև որոշակի խոստումներ տված լինեն, որոնք, ինչպես ցույց տվեց ապագան, չպահվեցին: Եվս մեկ կարևոր իրողություն է կապված Գրիգորի աթոռակալման հետ. ըստ Մ. Օրմանյանի՝ Գրիգորի ընտրության յուրահատկություն այն էր, որ մասնակից չէին «արևելյան» եպիսկոպոսները[6]: Իրապես, Մեծ Հայքի հոգևորականության ներկայացուցիչները նրա ընտրությանը չէին մասնակցում, բայց դա այլևս առանձնահատուկ երևույթ չէր. քանի որ, ինչպես վերը խոսվեց, Ստեփանոս Հռոմկլայեցու ընտրությանը ևս «արևելցիները» չմասնակցեցին: Իսկ իրական յուրահատկությունն այն էր, որ Գրիգորը ձեռնադրվեց ներկա եպիսկոպոսների կողմից, բայց օծման արարողություն տեղի չունեցավ: Ստեփանոս Օրբելյանի, որը դեռևս Կոստանդին Կատուկեցու օծման շրջանում համարվում էր հայրապետական աթոռի ամենահավանական թեկնածուներից մեկը, դրվատալից խոսքը Անավարզեցու վերաբերյալ, (նույնիսկ այն դեպքում, երբ ձեռնադր-

---

[1] Անավարզեցին հայտնի է եղել նաև Տուրքերիցանց մականվամբ: Տես Սամուէլ Անեցի և շարունակողներ, ժամանակագրութիւն, Ադամից մինչեւ 1776 թ, աշխատասիրությամբ Կ. Մաթեւոսյանի, Ե., 2014, էջ 267, «Տուրք երիցանց» տարբերակով է հիշատակվում նաև Հեթում պատմիչի մոտ: Տե՛ս Հեթում պատմիչ թաթարաց, յեղելալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ, Վենետիկ, 1842, էջ 85:

[2] «Հեթում Բ-ի գահակալության օրոք տեղի ունեցավ արհավիրք, որը կաթողիկոսարանը ավելի սերտ կապեց թագավորության հետ»: Գրուսսե Ռ., Լևանտի կայսրությունը, Տեր Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը , Հատոր Ա, էջ 356:

[3] Տե՛ս Օրմանեան Մ., Ազապատում, հատոր Բ, Ե., 2001, ս. 2031:

[4] Ստեփաննոս Օրբէլեան, էջ 446:

[5] Նույն տեղում:

[6] Տե՛ս Օրմանեան Մ., նշվ. աշխ., հ. Գ, ս. 2031:

մանը փաստացիորեն «արևելցիները» չեին մասնակցել), կարող էր վկայել կիլիկյան հոգևորակնության հետ որոշակի համաձայնությունների գոյության մասին, որոնք, սակայն, խախտվել են: «Արևելցիները» չեն ընդդիմանում և չեն բողոքարկում կատարված ձեռնադրությունը, ուստի դժվար է չհամաձայնել Մ. Օրմանյանի հետ. «Այս զգուշաւոր ընթացքը իրաւունք ունինք վերագրել Արևելեայց պետն ու գլխաւորն եղող Ստեփանոս Օրբելեանի խոհականութեան, որ զգացած է անշուշտ թէ հայրապետութեան պառակտումը վտանգաւոր ու կարի վնասակար կըլլար ազգային եկեղեցւոյն…»[1]: Հենց կաթողիկոսի ձեռնադրությունից փոքր անց էլ տեղի է ունենում Հեթումի առաջին հեռացումը գահից և, ինչպես վերը նշվեց, տեղապահի պաշտոնը հանձնելով իր հաջորդ եղբորը Թորոսին, նա այնդուհանդերձ քաղաքական գործընթացների վրա շարունակում է պահպանել իր ազդեցությունը: Ըստ ամենայնի, Հեթումի՝ հենց այս շրջափուլում հեռանալը աշխարհիկ կյանքից պայմանավորված էր նաև հոգևոր ոլորտում իր ենթակային (Տվյակ դեպքում Գրիգոր Անավարզեցուն) նշանակելու հետ: Այս պարագայում իրավական առումով էլ հոգևոր իշխանության ոլորտում Հեթումը կարող էր լիարժեք հանգիստ լինել իր ծրագրերի, մտահաղացումների իրագործման տեսանկյունից: Կղեմես Գալանոսը թվարկել է այն կետերը, որոնք սկզբունքային նշանակություն ունեին կաթողիկոսի համար և, որոնց փոփոխության դեպքում, լուծվելու էր առաքելական և կաթոլիկ եկեղեցիների միավորման, առավել ստույգ, կաթոլիկ եկեղեցու հետ տարրալուծման խնդիրը: Դրանք տասչորսն էին: Ստորև ներկայացնենք դրանցից առավել կարևորները. ա. պաշտոնապես ճանաչել կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների կողմից ընդունված առաջին յոթ տիեզերական ժողովները և դրանց ընդունած որոշումները (մինչև Նիկեայի՛ Ը դ. տեղի ունեցած ժողովը)[2],բ. ճանաչել Քրիստոսի երկու բնության վերաբերյալ սկզբունքային դոգման, գ. Սուրբ ծննդյան տոնակատարությունը տեղափոխել դեկտեմբերի 25-ին, դ. համապատասխանեցնել հայ առաքելական եկեղեցու բոլոր տոները կաթոլիկ տօնացույցի հետ, ե. քահանայական աստիճանակարգությունը համապատասխանեցնել կաթոլիկ եկեղեցական աստիճանակարգի հետ,զ. պատարագի բաժակի մեջ ջուր խառնել, ինչպես որ ընդունված է լատինների մոտ[3]: Նշված կետերն էլ ցույց են տալիս, որ դրանց ընդունումը փաստացիորեն ենթադրելու էր հայ առաքելական եկեղեցու ինքնուրույնության վերացում: Սակայն հասկանալի էր, որ այս ծրագիրը կաթողիկոսը չէր կարող միայնակ և արագորեն իրագործել, դա էր պատճառը, որ սկզբնական շրջանում նա բավական զգույշ էր գործում՝ փորձելով նաև քայլ առ քայլ հավաքագրել համակիրներ հայ հոգևորականության հատկապես վերնախավի շրջանում[4]: Մարտավարությունը ընտրված էր հետևյալ կերպ. ծիսական նորամուծությունները, որոնք կատարվում էին անձամբ կաթողիկոսի կողմից, «ցանցային» միջոցներով տարածվում էին նաև ենթակա հոգևոր հաստատություններում, և որևէ պարտադրանք ըստ էության գոյություն չուներ. պաշտոնապես կաթողիկոսը տվել էր ծիսական վարքի «ազատություն»: Բնական է, որ հոգևոր առաջնորդի նման վարմունքը իր հետ բերելու էր նաև ընդօրինակողների բազմության ձևավորում, որն էլ ապագայում հանդիսանալու էր միարարների (միարարներ կամ ունիթորներ- հռոմեադավան կաթոլիկ եկեղեցու հետ միավորման կողմնակիցներ) քաղաքական խմբավորման միջուկը: Առայժմ որևէ կանոնական որոշում, եկեղեցական հատուկ ժողով, որն էլ հենց իրավասու էր քննարկել նման հարցերը, չկար: Այդ ամենը, ըստ կաթողիկոսի, պետք է լիներ միայն այն ժամանակ, երբ դավանաբանական փոփոխությունների գաղափարը բավարար չափով աջակիցներ ունենար: Փաստենք նաև, որ եթե Կիլիկիայում ծիսակարգային փոփոխությունները բավական լայն տարածում գտան հոգևոր հաստատություններում, ապա «արևելցիների» մոտ արդյունքներն դեռևս բավական աննշան էին[5]. «Դարձեալ և եդ սահման ի մի լուծցեն զՃրագալոյցն յեղ և ի թան և որ ինչ առանց մսոյ է, և մի ա-

[1] Նույն տեղում, ս. 2034:

[2] Հատկանշական է, որ Նիկեայի Բ ժողովից հետո տեղի ունեցած ևս յոթ ժողովները, որոնցից վերջինը տեղի է ունեցել Լիոնում 1274 թ., ճանաչվել են միայն կաթոլիկ եկեղեցու կողմից, որը հայոց եկեղեցու կողմից ևս ընդունելու խնդիր Գրիգորը չէր դրել:

[3] Տե՛ս Գալանոս Կ., Միաբանութիւն Հայոց սուրբ Եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ Եկեղեցւոյն Հռովմայ, հ. 1, Հռոմ, 1690, էջ 439:

[4] Տե՛ս Օրմանեան Մ., նշվ. աշխ., ս. 2044:

[5] Արդյունքները առավել տեսանելի էին դառնալու 1320-ական թթ., երբ դոմինիկյան վանական միաբանությունը ձեռնամուխ եղավ բուն հայկական տարածքներում կաթոլիկության՝ առավել համակարգված քարոզին և կարճ ժամանակ անց նկատելի հաջողություններ ունեցավ:

ռասցէն նաւակատիս մեծախորհուրդ տօնիցն: Եվ հրամայեաց ձէթ օրհնել հիւանդաց և մեղուցելոց և երեխայից. և սկսաւ առ սակաւ սակաւ ամենայն աւանդութիւնս Հռոմոց եկեղեցոյն սպրդեալ մուծանել ի մերս եկեղեցի…: Բայց մեզ արևելից կողմանցս ոչ ինչ ի վեր բերեալ ծանուցանէր: Այլ միայն այսքան համբաւեր թէ խնդրեմք զաթոռն Անտիոքու մեզ լինել. և վասն նուազեալ ժամանակիս կամիմք զմիաբանութիւն Հռոմոց ընդ մեզ և ամենայն ազգաց»[1]: Լիովին ըմբռնելի կարող է լինել Անտիոքի աթոռը կաթողիկոսական աթոռին ենթարկեցնելու Գրիգորի ցանկությունը, բայց այս պարագայում միանգամայն պարզ է, որ, զգուշանալով «արևելցիների» հնարավոր ըմբոստությունից, Գրիգոր Անավարզեցին ընդամենը փորձում էր քողարկել իր մտադրությունները «համազգային խնդիրների» առկայությամբ: Մ. Օրբելյանը ներկայացնում է կաթողիկոսի պատվիրակի՝ Կեսարիայի եպիսկոպոս Կոստանդինի այցելությունը «արևելք». նա այցը թվագրում է 1297 թ.՝ ենթադրելով, որ դա Սմբատի կառավարման սկիզբն էր, երբ երկիրը խաղաղության մեջ էր[2]: Սակայն այս ենթադրությունը փաստարկված չէ, ավելին՝ կարելի է կարծել, որ այն եղած պետք է լինի մինչև Սմբատի գահակալումը՝ Հեթումի կառավարման շրջանում: Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ ժողովականները, որոնք հավաքվել էին կաթողիկոսական պատվիրակին հանդիպելու, ներկայացնում էին Արարատյան աշխարհը, Լոռին և Սյունիքը: Այդ առումով բավական նեղանում են «արևելք» հասկացության սահմանները: Ըստ էության, հայոց կաթողիկոսին ենթակա «արևելյան» մնացյալ աթոռներում Գրիգորին ընդդիմանալու փորձեր չէին կատարվում: Դրա վառ օրինակներից էլ կարող է լինել Արտազի եպիսկոպոս Զաքարիա Ծործորեցին. «Իսկ Զաքարիա եպիսկոպոս … կամակից էր կաթողիկոսին»[3]: Ինչևէ, պատմիչի շարադրանքից պարզ չի՝ արդյո՞ք կաթողիկոսը նամակով էր դիմել, թե բավարարվել էր պատվիրակի բանավոր խոսքերով: Որևէ հստակ պահանջ «արևելցիների» առջև չէր դրվել, կաթողիկոսի պատվիրակը ավելի շատ նպատակ է հետապնդել պարզելու վերջիններիս դիրքորոշումը և հնարավորության դեպքում կողմնորոշելու դեպի «նոր դավանաբանական քաղաքականություն»: Ի պատասխան կաթողիկոսի այս հավաստիացումների՝ «արևելցի» հոգևորականները պատասխան թուղթ են հղում հայոց կաթողիկոսին: Այն սկսվում է հայոց կաթողիկոսի անձի և ստանձնած պաշտոնի հանդեպ հարգանքի և խոնարհության հավաստիացումներով: Ընդհանրապես, ամբողջ նամակը ներծծված է հոգևոր առաջնորդի նկատմամբ հարգանքով: Նամակում զգացվում է նաև հայոց հոգևոր առաջնորդի՝ իրապես տարածաշրջանային ազդեցության ընկալումը. «… և կաթողիկոս տիեզերական ի դրանէ Հոնաց և Լփնաց, ի ծովէ Կասպից և ի լեռնէ Կովկասեաց մինչ ի սահմանս եգիպտական և ի ծովն արևմտային..»[4]: Կարծես Ստեփանոս Օրբելյանը հիշատակելով վերոգրյալ տողերը՝ նաև պահանջում է հայոց կաթողիկոսին նույնկերպ ընկալել իր սոցիալական դիրքը, գնահատել այն և հանդես գալ հենց այդ դիրքից: Այնուհետև հատ առ հատ թվարկվում են հայ եկեղեցու եկեղեցական ժողովները, դրանց ընդունած առանցքային որոշումները և ամենակարևորը՝ հավաքի ներկայացուցիչների վստահությունը դրանց անսասանության վերաբերյալ: Ժողովի ներկայացուցիչները հատ առ հատ քննարկում և մերժում են կաթողիկոսի ներկայացրած ծիսական փոփոխությունները: Այդու՝ նրանք պահպանում են միջնադարյան հոգևոր էթիկետի, հոգևոր աստիճանակարգի բոլոր կետերը հակադրվելով, բայց ոչ ապստամբելով, ներկայացնելով իրենց մոտեցումը. «Ապա թէ աւելի ինչ կամ պակաս կամիք մուծանէլ յեկեղեցիս մեր, զոր ոչ ունիմք ի հարցն: Եւ կամ գրեալքս խոտան են առ ձեզ յայնժամ մի աշխատ լինիք և մի մե աշխատ առնէք. Ըստ ձեր կամաց լիցի աշխարհդ այդ և այլ ոք որ կամիցի և զմեզ թողէք ի մեր ստրուկ գերութեանս. և մեք կացցուք,մնասցուք ակն ունելով վերին այցելութեան: Եւ թէ թագաւորական սաստիւ պատժէք զմեզ, մեք պատրաստ եմք ի տանջանս, յաքսորս և ի բանտ. ի մահ և ի մեռանել ի վերայ սուրբ և առաքելական հարցն աւանդից»[5]: Ժողովի և նամակի կազմման աշխատանքներին մասնակցում են գերազանցապես Արարատյան աշխարհի, Սյունյաց և Լոռվա հոգևոր ու աշխարհիկ տերերը: Նրանց թվում էին Ստեփանոս Օրբելյանը, Բջնիի եպիսկոպոս Հովհաննեսը, Հաղպատի եպիսկոպոս Հովհաննեսը, Հավուց թառի եպիսկոպոս Մխիթարը, Գող-

[1] Ստեփաննոս Օրբէլեան, էջ 448:
[2] Տե՛ս Օրմանեան Մ., նշվ. աշխ., ս. 2064:
[3] Չամչյանց Մ., Հայոց պատմություն, Ե., 1984, էջ 305:
[4] Ստեփաննոս Օրբէլեան, էջ 451:
[5] Նույն տեղում, էջ 460:

թանի եպիսկոպոս Սարկավագը, Սյունյաց իշխաններ Էլիկում և Լիպարիտ Օրբելյանները, Պապաք և Էաչի Պռոշյանները և այլք[1]: «Այլ թէ զի՛նչ պխնի արար սոցա Գրիգոր Անաւարզեցի չէ՛ յայտ. բայց Ստեփաննոս Ուռպելեան՝ որ անհնարին ատելութեամբ էր ընդ նմա, գրեաց յետոյ առ նա թուղթ առանձին յոխորտանոք եւ յանդիմանութէամբ»[2]:Հաջորդող իրադարձությունները, որոնք տեղ գտան 14-րդ դարի սկզբին, էլ ավելի խորացրեցին հայոց եկեղեցու ներսում ձևավորված երկփեղկումը, տարածելով նաև հասարակության այլ շերտերի վրա ևս:

Ամփոփելով կարող ենք նշել, որ Գրիգոր Անավարզեցու և Հեթում Բ-ի դավանաբանական քաղաքականությունը, միտված լինելով թուլացնել հայոց թագավորության շուրջը ձևավորված արտաքին քաղաքական լարվածությունը առանձնակի հաջողություններ չարձանագրելով հանդերձ նկատելի բացասական ազդեցություն ունեցավ «հայկական աշխարհի» երկու հատվածների հարաբերությունների վրա: Դրանով հանդերձ դա ԺԳ դարավերջին և ԺԴ դարի սկզբին տարածաշրջանում ձևավորված արտաքին իրողություններին դիմադրելու փորձ էր, որը սակայն ձախողվեց:

**Давит Тиноян, АРМЯНСКИЙ КАТОЛИКОСАТ В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ ПРАВЛЕНИЯ ХЕТУМА II.** Последняя четверть XIII века поистине была переломным периодом в истории Киликийского армянского государства. Распространение монгольского владычества в Передней Азии с середины XIII века дошло своего апогея и начался постепенный упадок этого государства. Усилилась и становилась все враждебнее Мамлюкский султанат. В этот сложный период в Киликийском армянском царстве правил Хетум II, один из наиболее слабых и некомпетентных правителей в истории Киликийской Армении. Именно в период его правления зародилась и окрепла униатское движение в лоне Армянской Апостольской Церкви, что в итоге привело к углублению кризиса не только в «восточных» и «киликийских» слоях, но и в армянском обществе в целом. Лидером этого течения стал епископ Григор Анаварзеци, который в 1293 г. стал католикосом всех армян с помощью царя Хетума.

*Ключевые слова:* Царь Армении, регион, ильханство, мамелюки, государства крестононсцев, армяно-мемелюкский договор, католикос униат.

**Davit Tinoyan, THE ARMENIAN CATHOLICOSATE IN THE FIRST HALF OF THE RULE OF HETUM II.** The last quarter of the 13th century was truly a turning point in the history of the Cilician Armenian kingdom. The spread of Mongol rule in Asia Minor from the middle of the 13th century reached its peak and the gradual decline of this state began. The Mameluke Sultanate intensified and became more hostile towards the Cilician Armenia. During this difficult period, Hetum II, one of the weakest and most incompetent rulers in the history of Cilician Armenia, ruled in the Cilician Armenian kingdom. It was during his reign that the Uniate movement was born and strengthened in the bosom of the Armenian Apostolic Church, which ultimately led to a deepening crisis not only in the “eastern” and “Cilician” layers, but also in the Armenian society as a whole. The leader of this movement was Bishop Grigor Anavarzetsi, who in 1293 became the Catholicos of all Armenians with the help of King Hetum.

*Key words:* King of Armenia, region, ilkhanat, mameluks, states of crusaders, Armenian-mameluks treaty, catholicos, uniate.

[1] Տե՛ս Ստեփաննոս Օրբէլեան, էջ 461-463:
[2] Չամչյանց Մ., նշվ.աշխ էջ 292: